15766

355·1
P·27

1928

Բ Ա Ն Ա Ձ Ե Վ Ե Ր

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԱՐՄՐԱԴՐՈՇ ԲԱՆԱԿԻ 6-ՐԴ ԿՈՒՍԿՈՆՖԵՐԱՆՍԻ

2001

519

355.1
Բ-27

2017

№ 13 «ԿԵՐՄԻՐ ՁԻՆՎՈՐԻ» ԳՐԱԴԱՐԱՆ № 13

355.1
Բ-27

ԲԱՆԱՁԵՎԵՐ

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԱՐՄՐԱԴՐՈՇ ԲԱՆԱԿԻ ՀԱՄ ԿԿ (Բ) ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 6-ՐԴ ԿՈՒՍԿՈՆՖԵՐԱՆՍԻ

38/36

ԹԻՖԼԻՍ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 1927

ՅԵՐԵՎԱՆ 1928

6952

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ I ՏՊԱՐԱՆ
ՊԱՏ. 1213 ԳՐԱՌ 504 Բ.
ՏԻՐԱԺ 500

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԱՐՄՐԱԳՈՐԾ ԲԱՆԱԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՔԱՂ. ԹԻՖԼԻՍ № 16 18 ՆՈՅԵՄԲ. 1927 թ.

Բոլոր քաղմարմինների պետերին, ռազմական կոմիսարներին, կուս. բյուրոներին յեվ ՀԱՄ ԿԿ (Բ) ու ՀԱՄ ԼԿՅԵՄ անդամներին

ԹԱՆԿԱԳԻՆ ԸՆԿԵՐՆԵՐ

Ընդամին հայտարարելով բանակային 6-րդ կոնսկոնֆերանսի բանաձեվերը ճըշդրիտ և անչեղորեն կիրառելու համար, ԿԿԲ Քաղվարչությունն անհրաժեշտ է համարում ձեր հատուկ ուշադրությունը հրավիրել հետեվյալի վրա.—

Կոնսկոնֆերանսը միաբերան արձանագրել է բանակի մարտունակության հետա-

դա ամրապնդումը բոլոր բնագավառներում։ Այդ ամրապնդումը, անկասկած, զարգացել է կուսակցությունների լենինյան միասնության և իդեոլոգիական առողջացման հիման վրա և քաղմարմինների կուսակցական ղեկավարության հիման վրա.

Սակայն, քաղվարչությունն անհրաժեշտ է համարում նախազգուշացնել կուսակցություններին, վոր այդ հաջողությունների պայմաններում հնարավոր է աշխատանքի թափի իջեցումը։ Միջազգային կացությունը, կապված ԽՍՀՄ ամրապնդման և աճման հետ, շարունակում է պահանջել մեր հատուկ ուշադրությունը մեր զորամասերի անմիջական մարտական պատրաստության հարցերի վերաբերյալ, այն առումով, վորպեսզի բանակի վողջ կազմը, սկսած ավագ պետերից մինչև շարքային մարտիկները, արագ թափով ձեռք բերի պատերազմի և մարտի համար ռեալ պարագայում անմերժում գործելու փորձ և հմտություն։

Այստեղից էլ թե քաղմարմինների և թե կուսակցության անդամների հիմնական ուշադրությունը, բոլոր և ամեն տեսակի ձեռնարկումների ժամանակ, պետք է կենտրոնացած լինի հատկապես այդ հատկությունների ստուգման վրա՝ ինչպես պետական մեջ, մարտիկների մեջ, այնպես էլ, առաջին հերթին, կուսակցություններում և քաղմարմիններում։ Բոլոր բնագավառներում համառ և անդադար նախապատրաստվել ԽՍՀՄ դեմ ուղղված անխուսափելի և մոտագա ժամանակաշրջանի ընթացքում հնարավոր հակահեղափոխական պատերազմի համար— ահա քաղմարմինների հիմնական գլխավոր աշխատանքը։

Միջազգային կացության բարդությունը, այն խնդիրների լրջությունը, խնդիրները, վորոնք առաջադրված են կուսակցության կողմից սոցիալիստական հիմունքներով ԽՍՀՄ արմատապես վերակառուցման յենթարկելու ընդավառում, անչափ վորակապես բարձրացնում են կուսակցության ղեկավարությունն անկուսակցական մասսաների նկատմամբ և ուժեղացնում են մեր կուսակցական պատասխանատվությունն այդ ղեկավարության և ազդեցության մշտականության, նկնության և անընդհատության համար։ Այդ խնդիրը կիրագործվի, յեթե միայն իրենք կուսակցությունները անընդհատ և ուժեղ թափով աճեն իդեոլո-

պիսակես, ներքին բայլշևիկյան զոդումն ու շարքերի ամրակուռությունն պահպանեն՝ կուսակազմակերպության կազմի պաշտոնական և ծառայողական բոլոր ողակների միջև առողջ կուսակցական փոխհարաբերությունների հիման վրա։ Այդ ներկուսակցական անելիքները և անընդհատ անման ու բանվոր-գյուղացիական մասսաների՝ բանակցիների վրա ունեցած կուսակազմակերպությունների իդեոլոգիական ազդեցության ուժեղացման անելիքները—միակ ճշմարիտ և հաստատ յերաշխիքն է սոցիալիստական ուղիով հետագա առաջխաղացման և զորամասերի մարտական հզորության ամրապնդման։

Կոմյերիտմիությունը կուսակցության ողնաշարն է և խոշորագույն լծակը Կարմիր բանակում։ Կոմյերիտմիության աշխատանքում մենք արդեն կուտակել ենք բավականին փորձ։ Անհրաժեշտ է միայն, առորյա գործնական աշխատանքի ընթացքում, այդ փորձը խնամքով խմի դումարել և 1-ին կոմյերիական և կուսակցական կոնֆերանսների վորոշումների հիման վրա իրացնել, ըստ վորում չմոռանալով, վոր խոսքը զորամասերում կուսակազմակերպությունների ամենագլխավոր և ամենախոշորագույն պահեստի մասին է։ Կոմյերիտմիության հաշվին աճում է մեր կուսակցական կազմակերպությունը, և այդ մեզ վրա դնում է հատուկ պատասխանատվություն նրա իդեոլոգիական կայուն լենինյան դաստիարակության համար։ Դարձնել յուրաքանչյուր կոմյերիտականին իրապես, նկատելի կերպով մի գլուխ բարձր շարքային բանվոր ու գյուղացի կարմիր-բանակայինից բոլոր ասպարեզներում—ահա կարն ձևակերպած, բայց վճռական անելիքը կուսակազմակերպությունների։

Վորպես ուրիշ կարևորագույն լծակ և կուսակցության ազդեցությունը տարածող, նրա առաջ կանգնած խնդիրների լուծման ողնական՝ հանդիսանում է պետերի կազմը։ Աշխատանքը պետակազմի հետ, և հատկապես անկուսակցականների հետ—ահա քաղմարմինների և կուսակազմակերպությունների թույլ տեղը։ Մեր առաջ է պետակազմի միանգամայն ճշգրիտ, վաղ արտահայտված նրվիրվածությունը կոմկուսակցության։ Մեր առաջ է նույնպես բացահայտ կերպով նրա կողմից արտահայտված ձգտումը—դառնալ մեր վողջ քաղաքականության ակտիվ, ավելի գործունյա հաղորդիչը։ Բայց կոնֆերան-

սում մեր առջևից, նույնպես պարզ կերպով անցան և այդ յերևույթների բոլոր բաց կողմերը։—Մի կողմից պետականի մի մասն ունի անբավարար պատրաստություն, անբավարար կարողություն այդ խնդիրը լուծելու համար, մյուս կողմից—քաղաքականներն և կուսակցական կազմակերպությունները միշտ չեն ճիշտ գնահատում և բավարար չափով ուշադրություն դարձնում պետականի՝ կուսակցության քաղաքական դծի կիրառման հետ կապված աշխատանքի ընթացքում յերևան յեկած առանձին թերացումներին և բացերին։ Մեր անելիքը կայանում է նրանում, որպեսզի ամեն կերպ խրախուսելով այդպիսի հրամանատարներին և քաշելով նրանց քաղուսավորական աշխատանքի մեջ, ամենայն ոգնություն ու աջակցություն ցույց տանք նրանց այդ գործում ծառայողական և ընկերական մեծ ուշադրության և մոտեցման հիման վրա, միաժամանակ ձգտելով ամենալայն կերպով զարգացնելու այն ձևերը, որոնք նպաստում են պետականի կուլտուրական և քաղաքական հետագա աճման։

Այստեղ, և վոչ մի դեպքում, չպետք է մոռացվի և կրտսեր հրամանատարը, որ-

պես մեր ազդեցությունը բանակային վրա տարածող ամենամոտիկ և անմիջական ոլորակը։

Կոչ անելով կուսկազմակերպություններին և՛ ավելի համախմբվելու քաղմարմինների շուրջը, քաղաքական վարչությունը հավատացած է, վոր Կովկասյան Կարմրադրոշ բանակի քաղաքական մարմինների և կուսակցական կազմակերպությունների միահամուռ ջանքերով բանակային 6-րդ կուսկոնֆերանսի վորոշումների կենսագործումը լիովին ապահովված կլինի։

Կոմունիստական բարեվներով

Բանակի քաղաքական վարչության

պետ՝ ՎԱՍԻԼՅԵՎ

ԲԱՆԱՁԵՎ

ՀԱՄ ԿԿ (Բ) ԱՆԴԻՅԵՐԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԸՆԿ. ՆԻԶԱՐԵԹՅԱՆԻ ՆԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԱՐԱԾ ՋԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

Լսելով և քննության առնելով ընկ. Նազարեթյանի զեկուցումը ներկուսակցական դրության մասին և Համ ԿԿ (բ) Կենտկոմի և Կենտրոնական Վերստուգիչ Հանձնաժողովի պլենումի արդյունքների մասին, Կովկասյան Կարմրադրոշ բանակի 6-րդ կուսկոնֆերանսն ամբողջությամբ և լիովին հավանություն է տալիս 15-րդ համագումարի առթիվ պլենումի ընդունած վորոշումներին։ Կոնֆերանսն արձանագրում է, վոր սոցիալիստական շինարարության հիմնական խնդիրները, մեր յերկրի ինդուստրիացումը, վոր դրվել են կուսակցության և յերկրի առաջ Համ ԿԿ (բ) 14-րդ համագումարի կողմից, անցած ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում մեր լենինյան Համ ԿԿ (բ) Կենտկոմի կողմից ճիշտ են դրվել և լուծվել, վորի մասին վկայում են այն հաջողությունները, վորոնք մենք ունենք Հոկտեմբերյան հեղափոխության տասներորդ տարեդարձին։

Կոնֆերանսը նույնպես միանդամայն ճիշտ և անհրաժեշտ է համարում ոպոզիցիայի լիդերներ ընկ. ընկ. Տրոցկուն և Զինովյեվին Կենտկոմի կազմից արտաքսելը, լիդերներ, վորոնք խզել են իրենց կապը լենինիզմի հետ և կանգնել՝ իր ժամանակին Լենինի և լենինյան Կենտկոմի ղեկավարությամբ կուսակցության կողմից ջախջախված հակալենինյան հոսանքների և խմբերի մնացորդներից յերկրորդ՝ տրոցկիստական կուսակցություն ստեղծելու ճանապարհի վրա։

Կուսակցության դեմ մղած իր պայքարում ոպոզիցիան անցել է բոլոր սահմանները։ Լենինիզմի հիմնական սկզբունքները նա փոխարինում է տրոցկիզմով, նա կոպիտ կերպով խախտում է բայշևիկյան-լենինյան կուսակցության կանոնադրությունը, կազմակերպելով իր ֆրակցիոնեական ընդհատակյա աշխատանքը, կապվելով բուրժուական և հակա-խորհրդային տարրերի հետ։ Ֆրակցիոն աշխատանքը դադարեցնելու մասին կուսակցությանը տված խոստումներն ոպոզիցիայի համար յեղել են սոսկ ծածկոցներ, վորպեսզի ավելի լավ քողարկեն

իրենց պառակտողական գործունեությունը։ Համ ԿԿ (բ) Կենտկոմի դեմ մղած պայքարի ընթացքում կապվել և ոգտագործել այնպիսի տարրերի, որպիսիք են Կոմինտերնից արտաքսված Ռուտ Ֆիշերը, Մասլովը, Ուրբանսը, Սուվարինը և ընկերությունը, ասում է այն մասին, որ Ֆրակցիոն պայքարի մեթոդներն ոպոզիցիան փոխադրել է և Կոմինտերնի շարքերը։

Լենինյան կուսակցության միասնության շահերը պահանջում են պառակտիչների և Ֆրակցիոներների դեմ ձեռք առնել վճռական միջոցներ։ Չի կարելի թույլատրել ոպոզիցիային, որպեսզի նա փետի կուսակցությունը և սոցիալիզմը կառուցողների շարքերում և միջազգային պրոլետարիատի ավանգարդի շարքերում քայքայում առաջացնի։

Կոնֆերանսն առաջարկում է 15-րդ համագումարին վճռապես և հաստատ հայտարարել տրոցկիստական ոպոզիցիային, որ նման դրություն այսուհետ չարունակվել չի կարող։ Ոպոզիցիան պետք է կամ ազնիվ կերպով աշխատի ամբողջ կուսակցության հետ միասին, յենթարկվելով նրա որոշումներին, կամ թե չէ նա իրեն կդնի կուսակցության շարքերից դուրս։ Այլ ընտրություն լինել չի կարող։ Սոցիալիստական լրված շինարարության և ԽՍՀՄ դլխին կախված պատերազմական վտանգի շրջանում կուսակցությունը վոչ վոքի թույլ չի տա թերահավատություն և խուճապ մտցնել իր պողպատյա շարքերի մեջ։

Կոնֆերանսը չի կարող անցնել Կարմիր բանակում «կուլակային վերասերման» և «բոնապարտիզմի» մասին ոպոզիցիայի արած հայտարարության կողքից, մի բան, որ փոխ է առնված մենշևիկյան գինանոցից։ Մենք զզվանքով հերքում ենք այդ մենշևիկյան զրպարտությունը և հայտարարում, որ բանակի կուսկազմակերպությունը միշտ յեղել է և կմնա, որպես միաձուլված լենինյան մի ջոկատ, որ կուսակցության ազդեցությունը սիստեմատիկորեն բարձրանում է, որ Կարմիր բանակը կամբապնդվի վոչ միայն, որպես Հոկտեմբերի նվաճումների պաշտպան, բայց և որպես մեծ դարբնոց բանվորների և գյուղացիների միության՝ լենինյան Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ։

Կեցցե՛ լենինյան Համ ԿԿ (բ) Կենտկոմը։

կեցցե՛ Համ ԿԿ(բ) և Կոմինտերնի անհողդողդ յերկաթի միասնությունը։

Կորչեն կուսակցության քայքայիչներն ու պառակտիչները։

ԲԱՆԱՁԵՎ

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԱՐՄՐԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑՄԱՆ ԱՌԹԻՎ

1. Լսելով ԿԿԲ քաղաքական վարչության պետ ընկ. Վասիլյեվի զեկուցումը, կոնֆերանսը վորոշում է ԿԿԲ քաղվարչության քաղաքական և կազմակերպչական գիծը համարել ճիշտ և նրա գործնական աշխատանքին հավանություն տալ։

2. Բանակային 5-րդ կուսկոնֆերանսից հետո ընկնող ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում ԿԿԲ կուսակցական կազմակերպության առաջ կանգնել են մի շարք կարևորագույն խնդիրներ։

ԽՍՀՄ դեմ ուղղված հակահեղափոխական պատերազմի սրված վտանգը բացառիկ կարևորություն է տվել բանակի մարտական հզորությունն ամրապնդելու խնդիրներին և առաջին պլանում առաջադրել է յերկրի պաշտպանունակությունն, ամբողջովին, բարձրացնելու խնդիրը։

Տրոցկիստական ոպոզիցիայի պառակտողական գործունեությունը, վոր ավելի յե հեռացել լենինիզմից և կանգնել յերկրորդ կուսակցություն ստեղծելու ճանապարհի վրա, մշտական լարված պայքարի անհրաժեշտություն է ստեղծել, պայքար, վոր մղվում է միասնության համար, մեր կուսակցության լենինյան գծի համար, տրոցկիզմի դեմ, մեր կուսակցության բայլշևիկյան դիսցիպլինան կործանելու ֆրակցիոներական ձգտումների դեմ։

Միևնույն ժամանակ անընդհատ բարդացել են աշխատանքի պայմանները բանակի ներսում, բանակի բոլոր խավերի քաղաքական ակտիվության հետագա աճման հետևանքով, աճումն, վոր իրենից ներկայացնում է մեր յերկրի բոլոր դասակարգերի և խմբերի ակտիվության վերելքի արտացոլումը։

Անցած ամիսների փորձը ամենաակնհայտնի կերպով ցույց է տալիս, վոր այդ բոլոր խնդիրների լուծման գործում ԿԿԲ կու-

ռակցական կազմակերպությունը ձեռք է բերել նշանակալից հաջողություններ։ Մեր բանակի կուսակցական մասսաները ավելի հասատ, քան յերբևիցե յեղել է, կանգնած են լենինյան դիրքերում։ Շնորհիվ նրան, որ կուսակցության քաղաքականությունը ճիշտ է բեկվել քաղապարատի և կուսկազմակերպությունների աշխատանքում, ավելի մեծ չափով է բարձրացել պրոլետարական ազդեցությունը և կուսակցության ղեկավարությունը բանակի ամբողջ կազմում, նրա կյանքի բոլոր բնագավառներում։ Դրա հետևանքով բարձրացել է բանակի մարտական պատրաստությունը։

Կոնֆերանսն արձանագրում է, որ Կովկասյան Կարմրադրոշ բանակի քաղաքական կացությունը լիովին հերքում է ոպոզիցիայի զրպարտիչ պնդումը Կարմիր բանակի կարծեցյալ «կուլակային վերասերման» վերաբերյալ։

3. Կուսակցական շինարարության բնագավառում կոնֆերանսը նշում է հետագա առաջխաղացումը աշխատանքի բոլոր ասպարեզներում, 14-րդ կուսհամագումարի, հարմամբ-թենական 15-րդ կուսկոնֆերանսի և

բանակային 5-րդ կոնֆերանսի վորոշումների հիման վրա։

Անցած շրջանում ձեռք բերած հիմնական հաջողություններն են.—

ա) կուսակցական անդամների վողջ մասսայի իդեական-քաղաքական անշեղ աճումը.

բ) կուսցանցի ամրապնդումը և բանակային կուսկազմակերպության առողջ աճումը պրոլետարական շերտի բարձրացման հետևանքին (բջիջներ առ 1-ն հունվարի 1927 թ. յեղել են—405, առ 1-ն հուլիսի 1927 թ.—430։ Անդամներ ու թեկնածուներ առ 1-ն հունվարի 1927 թ. յեղել են—4·461 հոգի, առ 1-ն հուլիսի—5·710 հոգի։ Կուսկազմակերպությունների կազմում բանվորներ 1926 թվի հուլիսին յեղել են 29 տոկոս, 1927 թվի հուլիսին—33 տոկոս).

գ) կուսակցական ակտիվության հետագա բարձրացումը, որն ապահովվում է բանակում սահմանված ներկուսակցական դեմոկրատիայի հիմունքների հետևողական կիրառմամբ։

Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում հետագայում ամրապնդել և զարգացնել բոլոր այդ նվաճումները և առաջարկում է հետևյալ հերթական անելիքները.—

ա) Կուսակցական կազմակերպությունների հիմնական ուշադրությունը պետք է կենտրոնացված լինի կուսակցական նորեկի բայլշևիկյան կոփվածության և դաստիարակության վրա, կուսակցական նորեկը, վորը կազմում է բանակային կազմակերպության հսկայական մեծամասնությունը (կուսակցության անդամները 1924 թ. ստաժով կազմում են 6,4%, 1925 թ.—14,4%, 1926 թ.—12,5%, թեկնածուներ—41,8%):

բ) Անհրաժեշտ է հետագայում ևս ուժեղ ուշադրություն դարձնել կուսակցական ակտիվի լայն շերտերի իդեական—քաղաքական պատրաստության հարցին:

գ) Կուսկազմակերպությունների սոցիալական կազմի կարգավորման ընդավառում անհրաժեշտ է սիստեմատիկորեն շարունակել պրոլետարական կորիզի հետագա բարձրացման կուրսը: Անհրաժեշտ է ուժեղացնել կուսկազմակերպությունների և առանձին կոմունիստների ակտիվ դերը բանվոր-կարմիր բանակայիններին, (մասնավորապես 1905 թվի զորակոչի կազմից) կուսակցության մեջ գրավելու գործում:

դ) Անհրաժեշտ է համառորեն շարունակել ընտրական ղեկավար կադրերի կազմի մեջ բանվորական խավի տեսակարար քաշի հետագա բարձրացման կուրսը (գնդային կուսբյուրոների կազմում դարձանը յեղել են՝ բանվորներ—44%, գյուղացիներ—22%, ծառայողներ—34%):

ե) Անհրաժեշտ է ավելի հետևողականորեն կիրառել կուսակցական վորոշումների իրագործման ստուգումը, մանավանդ բյուրոյի, բջիջի և կոլեկտիվի վորոշումների իրագործման ստուգումը:

զ) Կոնֆերանսը նշում է բանակի զորամասերում ամուր բայլշևիկյան կուսակցական ղեկավարության գոյությունը:

4. Անհրաժեշտ է շարունակել քաղմարմինների աշխատանքի այնպիսի կազմակերպման կուրսը, վորն կապահովի նրանց դերի և հեղինակության՝ վորպես դիվիզիայի ղեկավար կուսակցական կենտրոնի՝ հետագա բարձրացումը:

Կուսղեկավարությունը գնդում տանելու ընդավառում կոնֆերանսն առաջադրում է մի խնդիր—մաքսիմալ չափով բարձրացնել կոմիսարի—կուսակցության պատասխանատու լիազորի, կուսակցական կազմակերպության լիակատար ղեկավարի դերը:

5. Կոնֆերանսը ԿԿԲ կուսակցամակերպութիւնների և քաղաքարատի հերթական գլխաւոր խնդիրն է համարում առաջիկա շրջանում ուժեղացնել աշխատանքը պետերի կազմի հետ։ Բանակի զարգացման ամբողջ ընթացքը, կուլտուրապես և քաղաքականապես աճող կարմիր բանակային մասսայի դաստիարակութեան խնդիրը, կարգապահութեան հետագա ամրապնդման խնդիրը և, վերջապես յերկրի ընդհանուր տնտեսական և կուլտուրական վերելքի հիման վրա տեղի ունեցող իրեն պետակազմի պահանջների և կարիքների աճումը,—այդ ամենն առաջադրում են առաջին պլանում պետերի կազմի հետ տարվող աշխատանքի խնդիրները։

Ներկայումս մենք ունենք պետերի կազմի միանգամայն առողջ քաղաքական կացութիւն։ Հրամանատարական կազմի մեջ բանվորական շերտը հասել է 18,1 տոկոսի, կուսակցական հագեցվածութիւնը—45,8 տոկոս։ Պրոլետարական, կոմունիստական ազդեցութիւնը հրամկազմի վրա, հակառակ ապոզիցիայի դեմագոգիային, ապահովված է և շարունակում է անշեղորեն առաջ զարգանալ։

Սակայն, այդ դեռ չի բացասում այն,

թե հնարավոր է, վոր շրջապատող մանրբուրժուական տարերքի հիման վրա, պետերի կազմի մեջ (վոչ միայն անկուսակցական, այլ և յերբեմն կուսակցական) կմտնեն կարմիր բանակի համար վնասակար ազդեցութիւններ։

Կուսկազմակերպութիւնները և քաղաքարատը պետք է ամենաուշադիր կերպով հաշվի առնեն այդ բացասական ազդեցութիւնները, անալիզի յենթարկելով նրանց սոցիալ-քաղաքական արմատները։

Դրան պետք է հասնել հաստատ կերպով կիրառելով այն կուրսը, վորը յենթադրում է հետագայում ավելի ուժեղացնել կուսակցութեան ազդեցութիւնն ամբողջ պետերի կազմի վրա, ծավալել աշխատանքը ուժեղացնելու համար ինչպես ծառայողական, այնպես և արտածառայողական կապը քաղմարմինների ու կուսակցական կազմակերպութիւնների և պետերի կազմի միջև, ամեն կերպ քաջել նրան հասարակական—քաղաքական կյանքի մեջ, սահմանել ամբողջական փոխադարձ վստահութիւն պետերի կազմի և կուսակցամակերպութեան միջև։

Ավելի լրիվ կերպով պետք է ընդգրկվեն

պետակազմի քաղաքական և կուլտուրական պահանջները:

Պետակազմի հետ աշխատելու ձևերը վերանելու գործում անհրաժեշտ է մաքսիմալ չափով հայտարարել նախաձեռնություն, վորը հենվում է իրեն պետակազմի ինքնագործունեության վրա: Անհրաժեշտ է պետակազմի հետ աշխատելու ձևերի և գանգան տեսակների փորձի մանրակրկիտ հաշվառում և ուսումնասիրություն:

Հասկանալի է, պետակազմի քաղաքական ավելի ամրոզջական ընդգրկման խնդիրը չի կարող լուծվել միայն բանակային կազմի հետ տանելիք ընդհանուր աշխատանքի շրջանակներում: Այդ հանդամանքը պետք է իր ամբողջ պարզությամբ պարզաբանվի կարմիր բանակային լայն մասսաներին:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել շտաբների, վարչությունների և հիմնարկությունների աշխատողների կուսակցական—քաղաքական սպասարկման վրա:

Անհրաժեշտ է շարունակել միջին հրամանատարական կազմի կուսակցական ընդգրկման և բոլշևիզացման հրահանգավորման կուրսը:

6. Կոնֆերանսը նշում է, վորպես նվաճում, վորոշակի առաջխաղացում կուսքաղաքարատը բանակային 5-րդ կուսկոնֆերանսի վորոշումների հիման վրա պատերազմական ժամանակվա համար նախապատրաստվելու բնագավառում: Սակայն, արմատապես սխալ կլիներ դերագնահատել կատարված աշխատանքի հաջողությունները: Իր ամբողջ ծավալով վերցրած, այդ խնդրի լուծման մեջ արված են միայն առաջին քայլերը, և նա առաջվա պես պետք է մնա վորպես քաղմարմինների հիմնական աշխատանք:

7. Կոնֆերանսը նշում է, վոր կարված պատերազմական վտանգի ուժեղացման հետ, բեկումն է նկատվել դեպի աշխատավորական լայն մասսաների ռազմականացման աշխատանքների ուժեղացումը: Բանակային կուսկազմակերպությունը, կուսակցության դեկավար մարմինների հրահանգների համաձայն, պետք է լիովին ոգտագործի և ոգնի կազմակերպչական ճանապարհով այդ իսկական—մասսայական շարժման զարգացմանը: Այդ անկյան տակ հատուկ կարևոր նշանակություն է ստանում կարմիր բանակի և քաղաքացիական կազմակերպությունների կապի մասին արված Համկկ (բ) Անդրյերկոմի վորոշման իրացումը:

Կոնֆերանսն ընդգծում է ՊԱԶԸ–Ավիաքիմի միջտ աճող դերը և անհրաժեշտ է համարում, վորպեսզի քաղմարմինները և կուսակազմակերպությունները մեծացնեն իրենց ուշադրությունը և ակտիվ մասնակցություն նրա աշխատանքում:

8· Բանակի կարգապահության հետագա ամրապնդումը մի խնդիր է, վոր չարունակում է դեռ ևս լուրջ կանգնած մնալ հրամանատարական, քաղաքական կազմի և կուսակցական կազմակերպությունների առաջ: Այդ խնդրի լուծումը պետք է ընթանա հետևյալ ուղղություններով.—ա) պետկազմի և կուսակցական ու կոմյերիտական կազմակերպությունների դաստիարակչական աշխատանքի ուժեղացումը կարգապահության ամրապնդման հարցի մասին, բ) պետկազմի պահանջկոտության բարձրացումը կարմիր բանակայինների նկատմամբ, պարտադիր կերպով և ավելի լուրջ բարձրացնելով պահանջկոտությունը դեպի իր սեփական վարքագիծը, գ) կուսակցականների և կոմյերիտականների կարգապահության հետագա բարձրացումը, դ) ավելի մանրակրկիտ ուսումնասիրության յենթարկել այն պատճառները, վորոնք տեղիք են տալիս իրավազանցու-

թյունների կամ նպաստում են նրանց յերևման գալուն, և կարգապահական տույժերի ու խրախուսման ձևերի առանձին տեսակների գործադրման արդյունքները, ե) ավելի սիստեմատիկ և ճկուն ղեկավարություն կարգապահական գործնականի նկատմամբ: Բոլոր այս ձեռնարկումները պետք է վերջին հաշվով հանգեն կարգապահական գործնության դաստիարակչական և վարչական տարրերի ճիշտ (այսինքն Կարգապահական կանոնագրքի գծին և տված գրամասի կոնկրետ պայմաններին համապատասխանող) զուգակցմանը:

Հրամանատարական կազմը պետք է ավելի ևս կարգապահական քաղաքականության ճիշտ ղեկավարության մեջ դրավվի:

9· Կոնֆերանսը բավականությամբ արձանագրում է բանակային 5-րդ կուսկոնֆերանսից հետո ընկած ժամանակամիջոցում ձեռք բերած նշանակալից հաջողություններն ամբողջական միահրամանատարների առաջ քաշման գործում և այդ անպայման դրական պրոցեսը գնահատում է, վորպես մեկը լավագույն ապացույցներից այն բանի, վոր բանակում անշեղորեն աճում է կուսակցական ազդեցությունը: Կոնֆերանսն անհրա-

ժեչա ե համարում շարունակել առաջ քաշել վորպես միահրամանատարներ դեռ ևս առաջ չքաշված հրամանատարներին և ռազմականապես պատրաստված քաղաշխատավորներին։

10. ԱՍՑԽՀ մեջ յերկրային շինարարությունը շարունակում ե աճել և ամրանալ։ Յերկրային զորամասերը դարձել են խորհրդային իշխանության դաղափարների իսկական հաղորդիչները դյուղում։ Յերկրային զորամասերի պետակազմը և կուսակցական կազմակերպությունները արդեն աշխատանքի նշանակալից փորձ են կուտակել։ Յերկրային շինարարության հարցերին քաղաքական կազմակերպություններն ավելի յեն մոտեցել։

Կոնֆերանսը գտնում ե, վոր յերկրային շինարարության գլխավոր հերթական խնդիրը հանդիսանում և միջհավաքային աշխատանքի բարելավումը, վորը մինչև որս ել չի կարգավորված, նշանակալից չափով նրա համար, վոր բացակայում ե պարզ հարցադրումը սպասարկվող կոնտիդենտի մասին։ Հետագայում, միջհավաքային աշխատանքը պետք ե կառուցվի այն հաշվով, վորպեսզի առաջին հերթին ամբողջապես ընդգրկի յերկրային զորամասերի փոփոխական կազմը, չլուծելով այդ հիմնական անելիքը ամբողջ ազգարնակության ռազմականացման ընդհանուր աշխատանքի մեջ։

11. Կոնֆերանսն բավականությամբ արձանագրում և նշվող առաջխաղացումը դեպի մասսայական աշխատանքի սստիճանական աշխուժացման և բարելավման կողմը և լիովին հաստատում և այդ հարցի առթիվ բանակային 5-րդ կուսկոնֆերանսի կողմից տրված հրահանգները։

Մասսայական աշխատանքը պետք և ծավալվի ավելի ու ավելի լայն, նրա համար, վորպեսզի, քայլ առ քայլ, ամբողջ կուսակցության հետ միասին անընդհատ ուժեղացնելով բանվորա-գյուղացիական մասսաների ակտիվությունն ու հասարակայնությունը զորանոցում, ամեն կերպ ոգտագործվի այդ ակտիվությունը ամրապնդելու համար զորամասի մարտունակությունը բոլոր ուղղություններով, ռազմական շինարարության և զորամասի շինարարության բոլոր խնդիրների շուրջը կարմիր բանակայիններին հասարակական կարծիքի ավելի լայն կազմակերպության միջոցով։

Մասսայական աշխատանքի հաջող ծա-

վարման համար անհրաժեշտ պայմանը պետք է լինի պետերի կազմի և կարմիր բանակային մասսայի միջև փոխադարձ հարգանքի և ընկերական զորման հետագա ամրապնդումը և ամբողջ պետակազմի կողմից առանց բացառության, ինչպես ծառայողական պարտականությունների ժամանակ, այնպես էլ իր անձնական վարքագծով, լիակատար որինակելիության հասնելը:

Մասսայական աշխատանքի տեսակետից, կուսակցական կազմակերպությունները պետք է ավելի մեծ ուշադրություն հատկացնեն զորամասերի կյանքի և շինարարության տեղական հարցերին: Կուսկազմակերպություններում այդ հարցերը քննելիս պետք է ձգտել, վորպեսզի կուսակցության անդամներն ամբողջական տեղեկություն ստանան զորամասի կյանքի բոլոր բնագավառների մասին, նրա համար, վորպեսզի յուրաքանչյուր բջիջ կարողանա իրոք դնալ կարմիր բանակային մասսայի առաջից, ժամանակին և պարզորոշ կերպով ստեղծի նրա մեջ առողջ, ճիշտ վերաբերմունք դեպի ռազմական և ռազմա-քաղաքական ուսուցման խնդիրները, դեպի նյութական-կենցաղային կարգի առանձին դժվարություններն և այլն:

Քաղբարոյական կացության կարգավորման և ուսումնասիրության գործի հերթական խնդիրն է—բարելավել կարմիր բանակայինների տրամադրությունների անալիզը, այդ տրամադրություններին ճիշտ վերաբերմունք ցույց տալու նպատակով: Կարմիր բանակային մասսայի տրամադրությունները պետք է դիտվեն սերտ կերպով շաղկապված յերկրի ընդհանուր դրության հետ:

12. Կոնֆերանսը հաստատում է դիվիզիայի ռազմկոմների և քաղբաժինների պետերի ապրիլյան խորհրդակցության վորոշումը ազգայնական տրամադրությունների դեմ պայքարելու մասին, և առաջարկում է կուսկազմակերպություններին ավելի լայն և սիստեմատիկորեն ծավալել աշխատանքը այդ վորոշումը կյանքում իրագործելու համար, ձգտելով ամբողջապես վերացնել մեծապետական և տեղական ամեն տեսակի շովինիստական տենդենցները:

13. Բանակային 5-րդ կուսկոնֆերանսի և 1-ին կոմյերիտական կոնֆերանսի վորոշումների հիման վրա կոմյերիտական խմբակների աշխատանքների աշխուժացման մեջ կոնֆերանսը նշում է նշանակալից հաջողություններ: Կոմյերիտմիության հիմնական

ռնելիքները առաջիկա նման սահմանվում են այդ կոնֆերանսների տված հրահանգներով։

Կոնֆերանսը բավականությամբ նշում է, որ կոմյերիտական կազմակերպությունը ներկուսակցական պայքարում կուսակցության հետ միասին գտնվել է ճիշտ լենինյան դիրքերում։ Միաժամանակ կոնֆերանսը կուսկազմակերպությունների ուշադրությունը հրավիրում է այն հանգամանքի վրա, որ կոմյերիտականների նշանակալից մասը դեռ բավարար չափով չի հասկանում կուսակցության քաղաքականության սկզբունքային հարցերը։ Անչեղորեն բարձրացնել կոմյերիտմիության իդեական-քաղաքական ղեկավարությունը, ավելի ամբողջապես ընդգրկել կոմյերիտականների տրամադրությունները կազմած կուսակցական քաղաքականության հիմնական խնդիրների հետ—ահա թե ինչ պետք է լինի դրված հետագա ամբողջ աշխատանքի հիմքում։

14. Պատերազմի անմիջական վտանգի հետ կապված, այլ և յեկնելով ԽՍՀՄ սոցիալիստական շինարարության հերթական խնդիրներից, կոնֆերանսն առաջիկա շրջանի համար առաջարկում է մեր ագիտացիայի և

պրոպագանդայի հետևյալ հիմնական խնդիրները.—

ա) կարմիր բանակայինների և պետական ուշադրությունը սիստեմատիկաբար ուղղել դեպի միջազգային խնդիրները. ձգտել, որպեսզի նրանք ճիշտ հասկանան Կոմինտերնի, Համկոմկուսի և խորհրդային իշխանության քաղաքականությունը և բուրժուական պետությունների քաղաքականությունը, պարզելով այն անբակտելի կապը, որ գոյություն ունի ԽՍՀՄ դեմ կատարված առանձին յերևույթների և պատերազմի նախապատրաստման ընդհանուր իմպերիալիստական քաղաքականության միջև։

բ) Սիստեմատիկաբար պարզաբանել ԽՍՀՄ սոցիալիստական շինարարության հաջողություններն ու դժվարությունները, ավելի լրիվ և պարզ կերպով լուսաբանել բանվոր դասակարգի և գյուղական չքավորության ու միջակի հետ կնքած միության խնդիրները, այդ միության մեջ բանվոր դասակարգի ղեկավար դերը, որպես կարևորագույն նախադրյալը սոցիալիստական շինարարության խնդիրների հաջող ծավալման։ Այդ ամբողջ աշխատանքի պրոցեսում

պարզաբանել Կարմիր բանակի դերը սոցիալիստական շինարարության գործում։

գ) Սիստեմատիկաբար պարզաբանել հեքավորության ու միջակի սերտ միության վճռական դերը։

դ) Ավելի մեծ չափով գործնապես լուծել բատրակ և հեքավոր կարմիր բանակայիններին կուլտուրական օգնություն ցույց տալու հարցը։

Դրա հետ միասին կոնֆերանսն ուշադրություն է հրավիրում ավելի խորն ուսումնասիրել այն հարցերը, թե բանակային ինչպես է վերաբերվում մեր ագիտացիային և պրոպագանդային, թե վորքան հիշա են բեկվում նրա հասկացողության մեջ մեր լոզունգները։

15· Զորամասերի կուսակցական կազմակերպությունների կողմից ագիտպրոպ աշխատանքի բավանդակության զեկավարության բարելավում նշելով, կոնֆերանսը հատուկ ուշադրություն է դարձնում այդ ուղղությամբ բջջի աշխատանքի հետագա ուժեղացման վրա։ Բոլոր կուսկազմակերպությունների ուշադրությունը պետք է սրված լինի ագիտացիայի և պրոպագանդայի գաղափարական բայշեվիկյան կայունության խնդիրների վրա։ Ներկա պայմաններում այդ հարցը ձեռք է բերում հատուկ նշանակություն, կապված նրա հետ, վոր ագիտպրոպ աշխատանքի մեջ է գրավվում նշանակալից չափով անկուսակցական պետակազմը։

16· Կարմիր բանակայինների ակտիվության ընդգրկման և նրանց կուլտուրական ու քաղաքական պահանջներին բավարարություն տալու հարցը շարունակում է կազմել ամբողջ ագիտպրոպ աշխատանքի կարեվորագույն խնդիրը։ Դրա հետ կապված պետք է ամենալուրջ ուշադրությունը հատկացվի մասսայական քաղաքական ագիտացիային, կարմիր բանակայինների մասսայական ընդգրկման ձևերի և մեթոդների կատարելագործմանը։ Ուստի և նշանակալից չափով մեծանում է և արտադրական աշխատանքի նշանակությունը, վորի (աշխատանքի) հետագա վորակային բարելավումը պետք է կազմի զորամասերի կուսկազմակերպությունների ամենաառաջնակարգ անելիքը։ Քաղմարմինները, կուսկազմակերպությունները և քաղապարատը պետք է անհամեմատ ավելի մեծ ուշադրություն հատկացնեն դրա-դարանային աշխատանքին, վճռապես պայ-

քարեն ագիտացիոն–պրոպագանդիստական աշխատանքի ամբողջ սիստեմի մեջ զրադարանային աշխատանքի թերագնահատման դեմ։

Հաշվի առնելով, վոր կան նշանակալից կադրեր, վորոնք ինքնազարգացման կարիք են զգում և արդեն ինքնազարգացման աշխատանք են տանում, կոնֆերանսը հատուկ կերպով ընդգծում է ինքնազարգացման ղեկավարության կազմակերպման կարևորությունը առաջիկա տարում բոլոր հիմնական ուղղություններով (կուսինքնազարգացում, հրաման № 1515, քաղկոմի ռազմական պատրաստություն և այլն)։

17. Բանակային 5–րդ կուսկոնֆերանսի հրահանգը հակակրոնական պրոպագանդի մասին իրացված է չափազանց թույլ չափով։ Հակակրոնական պրոպագանդի ծավալմանը առաջիկա տարում բանակային 5–րդ կուսկոնֆերանսի բանաձևի համաձայն, պետք է հատկացվի ամենալուրջ ուշադրությունը։

18. Կոնֆերանսը նշում «Красный Воин» թերթի և ազգային կարմիր բանակային թերթերի հետագա նվաճումները և կարմիր բանակային լայն մասսաների հետ նրանց ունեցած կապի հետագա ամրացումը։

Զինթղթակիցների շարունակվող քանակական աճումն իր ամբողջ եությամբ բանակի կուսկազմակերպության առաջ դնում է զինթղթակցային շարժման նկատմամբ կուսղեկավարության ուժեղացման խնդիրը։ Բանակային 5–րդ կուսկոնֆերանսի այս հարցի մասին ընդունած բանաձևը պետք է կյանքում կիրառվի ավելի մեծ համառությամբ։

19. Կոնֆերանսը նշում է ԿԿԲ քաղվարչության ղեկավարության բարելավումը ռազմական ուսումնական հիմնարկների աշխատանքներում։

ԿԿԲ Քաղվարչության անմիջական ղեկավարությամբ կատարված ռազմական ուսումնական հիմնարկների միացումը, նպաստեց նրան, վոր վորակապես բարելավվել է այդ հիմնարկների աշխատողների կազմը։

Կոնֆերանսը հատուկ ընդգծում է ռազմական ուսումնական հիմնարկների վողջ կազմի ինտերնացիոնալ դաստիարակության ուժեղացման անհրաժեշտությունը։

Նշելով ռազմակրթական հիմնարկների ընթացիկ տարվա համալրման հաջողությունները, մասնավորապես, նրա բանվորական խավի մեծացման բնագավառում,

կոնֆերանսն անհրաժեշտ է համարում դըպրոցների բանվորական կորիզի հետագա անընդհատ մեծացումը։ Դրա հետ միասին, պետք է ամեն կերպ ուժեղացվի ռազմական ուսումնական հիմնարկների հերթական համալրման կամպանիայի նախապատրաստական աշխատանքը։

Կոնֆերանսը հատուկ ընդգծում է դըպրոցների աշխատանքում ազգային քաղաքաժիններին ավելի մեծ կապ և անմիջական մասնակցություն ունենալու անհրաժեշտությունը։

20. Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում ապահովել կարմիր բանակայիններին ընտանիքների արտոնությունների մասին գոյություն ունեցող որենքների ավելի լրիվ կիրառումը։

ԲԱՆԱՁԵՎ

ԲԳԿԲ ՔՂՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑՄԱՆ ԸՆԹԻՎ

1. Լսելով և քննելով ընկ. Շլիֆրեսի զեկուցումը Հանրապետության քաղաքական վարչության («ՊՈՒՌ») աշխատանքի մասին, ԿԿԲ 6-րդ կուսակցական կոնֆերանսը ՊՈՒՌ-ի քաղաքական և կազմակերպչական գիծը համարում է ճիշտ և հավանություն տալիս գործնական աշխատանքին։

Կոնֆերանսը նշում է, վոր ուժեղացել է ՊՈՒՌ-ի ղեկավարության բոլոր տեսակները Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի նկատմամբ։

2. Կոնֆերանսը նշում է, վոր 14-րդ կուսհամագումարից հետո անցած ժամանակաշրջանը յեղել է բանակային կուսկազմակերպության զաղափարական հետագա աճման մի շրջան, կուսկազմակերպության, վորը տրոցկիստական ոպոզիցիայի դեմ մղված իր պայքարում ստացել է Ս'լ ավելի լենինյան կոփվածություն և ջախջախիչ հակահարված է հասցրել կուսակցական շարքերի միասնությունը սասանելու համար կատարված բոլոր փորձերին։

Կոնֆերանսը նշում է, վոր բանակային կուսակցական և կոմյերիտական կազմակերպությունների մեջ և նրանց ղեկավար մարմիններում աճել է բանվորական շերտը, նշանակալից չափով ուժեղացել է կուսկազմակերպությունների իդեական-քաղաքական կյանքի թափը, մեծացել է կուսակցական

ակտիվի և նրա չարքային խավը, իշել և կուսակցական տույժերի քանակը և նշանակալից չափով ընդլայնվել և կուսակազմակերպությունների կողմից անկուսակցական մասսայի ընդգրկումը: Այդ ամենը հերքում են բանակային կուսակազմակերպությունների բյուրոկրատացման և վերասերման մասին արված ոպոզիցիայի գրպարտությունները:

3. ԽՍՀՄ անտեսության մեջ սոցիալիստական սեկտորի աճումը, բանվոր դասակարգի, գյուղական չքավորության և միջակ գյուղացիության նյութական դրության բարելավումն իրենց արտահայտությունն են գտել կարմիր բանակային կազմի քաղաքական կացության մեջ: Այդ անկասկած բավարար է կարմիր բանակային վողջ մասսայի նկատմամբ: Բանակի առողջ քաղաքական կացության ամենալավագույն չափանիշ է ծառայում կարմիր բանակային կազմի վերաբերմունքը դեպի պատերազմական վտանգի հարցը: Դրա հետ միասին կոնֆերանսը նշում է, որ Բանվորա-գյուղացիական Կարմիր բանակում դեռևս կան բացասական կարգի մասնակի տրամադրություններ (հավասարեցուցիչ տրամադրություններ, ազգայնական տրամադրություններ. խանդ դեպի բանվոր դասակարգը, գործադրկության հետ կապված տրամադրություններ, անբավարարություններ, վոր բղխում են բարձր դներից և այլն), վորոնց վերացումն առաջիա պես հանդիսանում է բանակի քաղաքական, կուսակցական և կոմյերիտական կազմակերպությունների և ամբողջ պետերի կազմի կարևորագույն խնդիրը:

4. Հակառակ նրան, վոր ոպոզիցիան դրպարտիչ հայտարարություններ է անում բանակի հրամկազմի կազրերի վերասերման մասին, վոր իբր թե նրա մեջ կան չանկայիական և բոնապարտական տարրեր, կոնֆերանսը նշում է, վոր բանակի հրամկազմի սոցիալական կազմը (16% բանվոր, 56% գյուղացի), վորի կեսից ավելին (ամբողջ հրամկազմի 54%-ը) կուսակցականներ են. հրամկազմի մեջ լայն չափով ծավալվող քաղաքաստիարակչական աշխատանքը և կարմիր բանակայինների քաղաքաստիարակության գործում հրամկազմի ունեցած լայն մասնակցությունն անկասկածելիորեն յուրաքանչյուր ոք հրամկազմի շրջանում կուսակցության ունեցած անսահման ազդեցության:

Հին բանակի սպայական կազմից մնացած հրամկազմն իր ճնշող մեծամասնությամբ փոքրվել է քաղաքացիական կռվի բովում և իր բախտն ամուր կապել է բանվորա-գյուղացիական իշխանության շահերի հետ։

Կոնֆերանսը նշում է նույնպես, որ անշեղորեն աճում է ռազմական դպրոցների շրջանավարտների մեջ բանվորական շերտը։

Կոնֆերանսը գտնում է, որ հրամկազմի քաղաքական ընդգրկմանը և կուսակցամակերպությունների իդեոլոգիական ազդեցությունն ուժեղացնելու հետագայի աշխատանքին խոչընդոտ է հանդիսանում այն հանգամանքը, որ անհնար է քիչ թե շատ լիովին սպասարկել հրամկազմի կուլտուրական-քաղաքական պահանջները՝ նյութական միջոցների և կուլտուրական համապատասխան հիմնարկությունների բացակայության հետևանքով։ Մասնավորապես ԿԿԲ նկատմամբ մինչև հիմա դեռ չի իրացված բանակային 5-րդ կոնֆերանսի վորոշումը մի շարք կայազորներում (Բաքու, Ցերևան, Լենինական, Քութայիս, Բաթում) Կարմիր Բանակի Տներ կազմակերպելու մասին։

5. Միահրամանատարության գործնությունը, վորն ավելի ու ավելի յե ընդլայնվում ԲԳ Կարմիր բանակում, արդարեցրեց իրեն։ Կոնֆերանսն ընդգծում է՝ հետագայում ևս կուսակցության անդամներից միահրամանատարներ առաջ քաշելու անհրաժեշտությունը (մասնավորապես անհրաժեշտ է ուժեղացնել քաղաշխատավորների առաջ քաշումը միահրամանատարների պաշտոնում) և միանդամայն ժամանակն է համարում վարչատնտեսական աշխատանքի առորյա վերահսկողությունից կոմիսարի աղատվելը, ազդային դորամասերում միահրամանատարության կիրառելը ԽՍՀՄ Հեղափոխական-Ռազմական Խորհրդի 1927 թվի № 234 հրամանի շրջանակներում։

6. Կոնֆերանսը նշում է, որ բանակային 5-րդ կուսկոնֆերանսից հետո ընկած ժամանակամիջոցում, նշանակալից քայլեր են արված բանակի մարտական պատրաստության, բանակը պատերազմի ժամանակվա պայմաններում գործելու նախապատրաստման խնդիրների իրացման բնագավառում, խնդիրներ, որ իրենց արտահայտությունն են գտել բանակային 5-րդ կուսկոնֆերանսի՝ ՊՈՒՌի զեկուցման առթիվ ընդունած բանաձևում։

7. Կուսակոնֆերանսը նշում է քաղաքատի լուրջ հաջողություններն ինչպես մարտական պատրաստության բնագավառում, նույնպես էլ յերթային մարտական պարագայի աշխատանքին հարմարվելու բնագավառում:

Դրա հետ միասին կոնֆերանսն անհրաժեշտ է համարում այդ աշխատանքի հետագայի անընդհատ ուժեղացումը, հետագայում էս համարելով այն քաղմարմինների հիմնական աշխատանքը:

8. ՊՈՒՈ-ի աշխատանքների մեջ հաջողություններ նշելով պատերազմական ժամանակի կուսքաղաշխատանքի վերաբերյալ հրահանգների և գրականության հրատարակելու գործում, կոնֆերանսը անհրաժեշտ է համարում, վորպեսզի՝

ա) Այդ ուղղությամբ աշխատանքը հետագայում ընդլայնվի, մասնավորապես ամենաարագ կերպով հրատարակվի «Քաղմարմինների դաշտային ծառայությունը», «Բարձրագույն հրամանատարության» հրահանգների քաղաքական աշխատանքի բաժանը և կուսակցական ու կոմյերիտական կազմակերպությունների պատերազմի ժամանակվա աշխատանքի կանոնադրությունը.

բ) ստորին աշխատավորների համար գրականություն հրատարակվի.

գ) հրատարակվող գրականության մեջ ավելի մեծ չափով արտացոլվի քաղաքացիական կռվի փորձը, այլև ռազմական խաղերի, դաշտային ուղևորությունների և զորաշարժերի ընթացքում կատարված աշխատանքների փորձը.

դ) հրատարակվի հատուկ հանրամատչելի գրականություն տակտիկական պարապմունքների շրջանում տանելիք աշխատանքի մասին.

ե) ՊՈՒՈ-ը ապահովի այդ գրականության թարգմանությունը ազգային լեզուներով:

9. Արձանագրելով Բանվորա-գյուղացիական Կարմիր Բանակի զորամասերի կարգապահության հետագա աճումը, կոնֆերանսը միևնույն ժամանակ նշում է, վոր պետակազմը և կուսակցական ու կոմյերիտական կազմակերպությունները բավարար աշխատանք չեն տանում որինակելի կարմիր բանակային դաստիարակելու խնդրի շուրջը, և վոր մարտական պատրաստության և կուսակցական-քաղաքական աշխատանքի բոլոր տեսակների մեջ բավարար չափով ու-

ժեղ չեն դատիարակչական մոմենտները։ Կոնֆերանսը հատուկ կերպով նշում է, վոր ինքը պետկազմը դեռևս բավարար չափով որինակելի ու կարգապահ չէ և վոր կուսակցականների ու կոմյերիտականների մեջ դեռ ևս գոյություն ունեն մեծ թվով որինազանցություններ։

Կոնֆերանսը նշում է, վոր դեռ ևս պատահում է, վոր բավարար ուշադրություն չեն դարձնում կարմիր բանակայինի կենցաղային կարիքներին, խեղաթյուրում են կարգապահական քաղաքականության դիծը (կոպտություն, մոտեցման մեքենայականությունը), վորը բացասաբար է անդրադառնում ԲԳԿԲ կարգապահության վրա, և գտնում է, վոր կարմիր բանակայինի ակտիվության աճման պայմաններում անհրաժեշտ է ամեն կերպ բարձրացնել մեր կարգապահական գործնեության վորակը։

10· ԽՍՀՄ աշխատավոր բնակչության լայն մասսաներին Խորհրդային Միության պաշտպանության պատրաստության մեջ դրավելու խնդիրը (ռազմականացումը) ՊԱԶԸ–Ավիաքիմի աշխատանքի ընդհանուր զարգացման և ամրապնդման պայմաններում, այնուամենայնիվ լուծվում է չափազանց դանդաղ կերպով և անսիստեմատիկորեն։ Դեպի ՊԱԶԸ—Ավիաքիմի աշխատանքը հայտնաբերած բոլոր կուսակցական և խորհրդային մարմինների ուշադրությունը պետք է ավելի մեծ չափով ուժեղացվի, քան այդ կա ներկայումս։ Հատկապես պետք է ուժեղացվի ՊԱԶԸ—Ավիաքիմի քաղաքացիական ակտիվ ստեղծելու համար տարվող աշխատանքը, այլ և ավելի լայն, ավելի պլանային կարգով պահեստի հրամկազմը բնակչության ռազմականացման մեջ քաշելու աշխատանքը, այնպես, վորպեսզի կազրային պետկազմի համար մնա միայն հրահանգավորումը, վորովհետև ներկայիս զբրությունը կազրային պետկազմից ահագին ժամանակ է խլում, ե վնաս գործատուներին իր աշխատանքի և իր ինքնապատրաստության։ Կուսակցական կազմակերպությունները պետք է մեծ ուշադրություն դարձնեն, վորպեսզի քաղաքացիական կազմակերպություններն ու հիմնարկությունները առաջ տանեն պատերազմի ժամանակվա համար նախապատրաստվելու իրենց աշխատանքը։ Պետք է նույնպես իրական միջոցներ ձեռք առնել կարգավորելու համար ռազմական բաժինները ԽՍՀՄ պարբերական

բոլոր հրատարակություններում, առանց բացառության։

11. Կոնֆերանսը, նշելով վորոշ աշխուժացում ԿԿԲ ազգային զորամասերի պետկազմի և կարմիր բանակայինների ռազմաքաղաքական ուսուցման համար անհրաժեշտ և հիմնական ձեռնարկների հրատարակման գործում, միևնույն ժամանակ գտնում է, վոր այդ կարգի հրատարակությունների պահանջի աճումը չի կարելի բավարարել այն գումարներով, վոր տրվել են մինչև այժմ այդ ձեռնարկումների համար, և անհրաժեշտ է համարում մեծացնել հատկացումներն այդ կարիքների համար։ Ճիշտ նույնպես, ԿԿԲ հրատարակվող թերթերի ներկայիս նյութական վիճակն այնպիսին է, վոր խախտում է «Կրասնիյ Վոյին» թերթի ամենորյա լույս ընծայելու հնարավորությունը և դիվիզիաների թերթերի շաբաթական գոնե յերկու անգամ լույս ընծայելը։ Կոնֆերանսը միանգամայն անհրաժեշտ է համարում պահպանել «Կրասնիյ Վոյինի» ամենորյա հրատարակությունը և դիվիզիաների թերթերի հրատարակությունը հասցնել շաբաթական մինչև յերեք անգամ։ Կոնֆերանսը գտնում է նույնպես, վոր ապ-

գային դիվիզիաների քաղբաժինների խմբագրատարակչական մասերի ներկայիս չտատների դեպքում չի կարելի յերաշխավորել ազգային լեզուներով գրականություն հրատարակելու կանոնավոր և անարգել աշխատանքները։ Նկատի առնելով, վոր ԿԿԲ բազմազգի զորամասերի ավելի մեծ չափով գրականություն դուրս գրելու պահանջ ունեն, քան միատարը կազմ ունեցող զորամասերը, կոնֆերանսը հաստատում է բանակի 5-րդ կոնֆերանսի վորոշումը կուսքաղլուսավորական աշխատանքի համար հատկացումների մեծացման անհրաժեշտության մասին։

12. Կոնֆերանսը խոշոր բաց է համարում կենտրոնից ուղարկվող գրականության սիստեմատիկ ուշացումը։ Այդ բացի վերացման համար կոնֆերանսը ՊՈՒՌ-ի ուշադրությունն է հրավիրում։ Կոնֆերանսը նշում է արձակուրդավորներին բաշխելու համար ուղարկվող գրականության ցածր վորակը և խնդրում է ՊՈՒՌ-ին վերացնել այդ բացը։

13. Կոնֆերանսը ՊՈՒՌ-ի ուշադրությունն է հրավիրում ուժեղացնելու կենդանի կապը ԿԿԲ զորամասերի հետ և ընդլայնելու ՊՈՒՌ-ի քաղաքական ինֆորմացիան։ այնպես, վորպեսզի հասնի այն մինչև դի-

վիզիտներն ու ռազմական ուսումնական հիմնարկները։

Կոնֆերանսը հրամայական անհրաժեշտություն է համարում ուժեղացնել բանակում քաղաքական աշխատանքների միջոցները, մասնավորապես, քաղմարմինների կենդանի ղեկավարության վերաբերյալ (կոնֆերանսներ, խորհրդակցություններ, տեսչական աշխատանք)։

ԲԱՆՍԱՁԵՎ

ԲԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀՐԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

1. Լսելով և քննելով ԿԿԲ Համկկ(բ) կուսակցական հանձնաժողովի պատասխանատու քարտուղար ընկ. Գուբինի հաշվետվությունը, բանակային 6-րդ կուսկոնֆերանսը ԿԿԲ ԿՀ կազմակերպչական ու քաղաքական գիծը ճիշտ է համարում և աշխատանքին հավանություն տալիս։

2. Կոնֆերանսն արձանագրում է, որ ԿԿԲ կուսհանձնաժողովը ամբողջապես և լիովին կանգնած է Լենինյան դիրքերում։

Ամբողջ կուսակցության հետ միասին նա վճռական հակահարված տվեց տրոցկիստական ոպոզիցիային։ Ֆրակցիոն աշխատանքը Կովկասյան Կարմրադրոշ Բանակում բացարձակապես վոչ մի հող չգտավ։ Նշելով մի քանի հազվադյուտ դեպքեր, յերբ բանակային կոմունիստները բանակից դուրս մատնակցել են Ֆրակցիոն աշխատանքի, կոնֆերանսը հանձնարարում է կուսհանձնաժողովին ամենավճռական միջոցներ ձեռք առնել բանակում Ֆրակցիոն աշխատանք տանելու ամենաչնչին փորձերի դեմ։ Նման փորձերը պետք է ամենանախնա կերպով մերկացվեն կուսակցության անդամների և կուսկազմակերպությունների կողմից։ Իսկ այդ փորձերը կատարողների նկատմամբ—վորպես բանակի կազմակերպիչ ուժի միասնությունը խախտողներ, վորպես անմիջական պատերազմական վտանգի պայմաններում բանակի մարտական ուժը ջլատողներ—կոնֆերանսը հանձնարարում է կուսհանձնաժողովին գործադրել կուսակցական ներգործության ամենախիստ միջոցները։

3. Կոնֆերանսը ԿԿԲ կուսակցական կազմակերպության կացությունը գտնում է առողջ։ Կուսակցական եռիկան խախտելու և

այլ կուսհանցանքների համար պատասխանատվության կանչելու քանակը սիստեմատիկաբար իջնում է (կուսկազմակերպության քանակի նկատմամբ պատասխանատվության է կանչվել 1925 թվին 3,8 տոկոս, 1926 թվին —2,6 տոկոս, և 1927 թվին—2,2 տոկոս)։

Դրա հետ միասին, նշելով, որ կուսակցության ավելի պակաս կայուն տարրերը յենթակա են մեր յերկրի անցյալի դեռ ևս չվերացված տարրերի, մանր բուրժուական տարրերի բացասական ազդեցության, նշելով մեր ռեալ հնարավորությունը, կոնֆերանսը հանձնարարում է կուսհանձնաժողովին շարունակել իր աշխատանքները՝ Համկկ(բ) 14-րդ կուսակցական համագումարի վորոշումների հիման վրա, այդ յերևույթը կանխելու և նրա դեմ պայքարելու ուղղությամբ։

4. Կոնֆերանսը հրավիրում է բոլոր կուսկազմակերպությունների ուշադրությունը վերացնելու նկատվող հիվանդագին յերևույթները, ինչպիսիք են կուսդիսցիպլինայի խախտում, կուսանկայունություն, հարբեցողություն, խառնակչություն, կոմերիկայի խախտում, գինվորական կարգապահության խախտում։

Ճիշտ համարելով, վոր կուսհանձնաժողովը պետք է ավելի խիստ մոտենա այդ հիվանդագին յերևույթների ավելի կոպիտ կերպով հանդես գալուն, կոնֆերանսն անհրաժեշտ է համարում հետագայում ևս շարունակել նախազգուշական—դաստիարակչական միջոցները կուսկարգապահության խախտումների և կուսանկայունության նկատմամբ, հատկապես կուսակցության թեկնածուների և յերիտասարդ անդամների շրջանում։

5. Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում հետագայում ևս պայքարել զորացրման տրամադրությունների առանձին հայտարերումների դեմ։ ԽՍՀՄ դեմ հակահեղափոխական պատերազմի վտանգի պայմաններում նման տրամադրությունները պետք է առանձին ուժգնությամբ մերկացվեն կուսկազմակերպությունների կողմից։

6. Կուսհանձնաժողովի ուշադրությունը հրավիրելով այն բանի վրա, վոր լիակատար չափով չեն իրագործված բջիջներում լուծվող կուսակցական հանցանքների հաշվառման և ուսումնասիրության մասին նախորդ կոնֆերանսների վորոշումները, բանակային 6-րդ կուսկոնֆերանսը հանձնարարում է

կուսհանձնաժողովին ապահովել այդ վորոշումների իրացման հսկողությունը (թվական հաշվառում, ուսումնասիրություն, բջիջների մոտեցումը)։

7. Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում բարելավել կոմյերիմիության հիվանդագին յերևույթների ուսումնասիրությունը և կապը ՀամԼԿՅԵՄ կոմիտեներին կից գործող կոնֆլիկտային հանձնաժողովների հետ։ Պետք է ավելի լուրջ ուշադրություն դարձվի կոմյերիտական հանցանքների համար պատասխանատվության կանչած կոմյերիտականների հաշվառման վրա, արտաքսվածների հաշվառման վրա, գործերի քննման ժամանակ խմբակների մոտեցման վրա, հիվանդագին յերևույթների պատճառների ուսումնասիրության վրա։

Կոնֆլիկտային հանձնաժողովների հետ կապ պահպանելու գործում անհրաժեշտ է Նրանց ուշադրությունը հրավիրել բանակի կոմյերիտական աշխատանքի առանձնահատկությունների վրա և ընդգծել, վոր բանակում կոմյերիտականներին մոտենալիս պետք է յելնել այն պահանջներից, վոր առաջադրվում են նրանց բանակում։

8. Նշելով կուսկազմակերպությունների սոցիալական կազմի կարգավորման մեջ նշանակալից բարելավում (ընդունված բանվորները 1926 թ. կազմել են 18,2 տոկոս, 1927 թվին—24,3 տոկոս), Կոնֆերանսը հանձնարարում է կուսհանձնաժողովին հետագայում ևս սիստեմատիկ աշխատանք տանել մեծացնելու համար ԿԿԲ կուսկազմակերպության պրոլետարական կորիզի տոսակարար կշիռը։

9. Սոցիալական այլ խմբերի հաշվին կուսակցության աճման հարցում անհրաժեշտ է—

ա) գյուղացիների նկատմամբ—ավելի խնամքով իրականացնել կարմիր բանակայինների չքավոր մասի հաշվառման և կուսակցության մեջ դրավելու մասին ընդունած նախորդ կոնֆերանսի վորոշումը։

բ) ծառայողների և այլքների նկատմամբ—առաջվա նման ամենախիստ կերպով իրագործել համակուսակցական հրահանգները, ուշադրությունը դարձնելով այն բանի վրա, վոր վոմանք փորձում են կուսակցության մեջ մտնել, ոգտվելով նրանից, վոր այդ ավելի հեշտ է անել բանակում, քան քաղաքացիական ծառայության մեջ։

10. Կոնֆերանսն ուշադրությունը հրավիրում է այն բանի վրա, վորպեսզի ավելի

լավ իրացվեն առաջին տարվա ծառայության կարմիր բանակայիններին կուսակցության մեջ գրավելու մասին ընդունած նախկին վորոշումները։ Առաջին հերթին պետք է ոգտագործվեն 1905 թվի զորակոչի բանվորական խավի հաշվին ամելու բոլոր հնարավորությունները։

11. Կազմակերպչական հարցերում կուսհանձնաժողովին անհրաժեշտ է շարունակել կուսակցական մասսաների հետ սիստեմատիկ կապ պահպանելու նախկին գիծը։ Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում բարելավել կուսհանձնաժողովի գործունեության լուսաբանումը թերթում և կուս. ատենակալների ինստիտուտի աշխատանքի հետագա բարելավումը։ Կուսատենակալները պետք է ընտրվեն 6 ամիս ժամանակով վերընտրական ժողովներում, վորտեղ և պետք է հաշիվ տան իրենց գործունեության մասին։

ԲԱՆՍԱՁԵՎ

ԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

Լսելով բանակի հրամանատար ընկ. Լեվանդովսկու զեկուցումը Կովկասյան Կարմրադրոշ Բանակի դրության մասին, բանակային 6-րդ կուսկոնֆերանսը վորոշում է.— ընկ. Լեվանդովսկու զեկուցումն ընդունել ի դիտություն*)։

---

*) Ընկ. Լեվանդովսկու զեկուցման առթիվ կոնֆերանսի ընդունած կոնկրետ առաջարկությունները ուղարկվում են գաղտնի։

ԲԱՆԱԿԱՅԻՆ
6-ՐԴ ԿՈՒՍԿՈՆՖԵՐԱՆՍԻ

ԴԻՄՈՒՄԸ

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԱՐՄՐԱԳՐՈՇ ԲԱՆԱԿԻ ԿԱՐՍԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻՆ, ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐԻՆ ՅԵՎ ՔԱՂԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ

Ընկեր կարմիր բանակայիններ, հրամանատարներ յեվ քաղաշխատավորներ

Լրանում է 10 տարին աշխարհիս ամենախոշորագույն հեղաշրջման—Հոկտեմբերյան Հեղափոխության, հեղափոխություն, վորը խլել է կապիտալիստներից ֆաբրիկաներն ու գործարանները, հանքերն ու հանքահորերը, հողը կալվածատերերից, հեղափոխություն, վորը վոչնչացրել է դասերի բոլոր արտոնություններն ու դարավոր տարկությունը և ամբողջ իշխանությունը տվել բանվոր դասակարգի ձեռքը:

10 տարի յե զոյություն ունի պրոլետարական առաջին պետությունը աշխարհիս

յերեսին: Ցեղ մղելով հայրենի և միջազգային բուրժուազիայի հարձակումները, խաղաղ զարգացման հնարավորություն ստանալով, պրոլետարական պետությունը վոչ միայն վերականգնել և պատերազմների հետևանքով քայքայված տնտեսությունն, այլ և առաջ և տանում այն սոցիալիստական ուղիով, միշտ ավելի դուրս վանելով նեպմանին ու կուլակին, բարձրացնելով բանվոր դասակարգի և գյուղացիության բարեկեցությունը: Խորհրդային կառավարության մանիֆեստը 7 ժամյա բանվորական որվան անցնելու մասին և գյուղացիության 35 տոկոսը հարկից ազատելու մասին ամենից ավելի վառ կերպով են ցույց տալիս Խորհրդային իշխանության նվաճումները և մեր պետության դասակարգային եյությունը: Կուսակցության և Խորհրդային իշխանության կողմից կիրառվող ազգային քաղաքականությունն ապահովել է Խորհրդային Միության բազմազգ աշխատավորության յեղբայրական խաղաղությունը և ԽՍՀՄ տնտեսապես հետամնաց մասերում բարենպաստ պայմաններ ստեղծել սոցիալիստական շինարարության համար:

Մեր սոցիալիստական շինարարության

ավելի ու ավելի ամուր ցույց է տալիս պրոլետարիատին և աշխարհիս ճնշված ժողովուրդներին, վոր միայն պրոլետարական պետությունը կարող է վոչնչացնել շահագործումը և քայլ առ քայլ բարելավել աշխատավորության բարեկեցությունը: Ահա թե ինչու միջազգային բուրժուազիային և բանվորական շարժման մեջ գործող նրա գործակալության—դավաճանական սոցիալ-դեմոկրատիային պատում է վախն ու կատաղի մոլությունն իր վաղվա համար: Ահա թե ինչու Հոկտեմբերյան Հեղափոխության 10-րդ տարեդարձի նախորեյին միջազգային իմպերիալիզմը ուժեղացրել է իր հարձակումներն ընդդեմ խորհուրդների յերկրի: Ահա թե ինչու ուրախությամբ և հպարտությամբ է լեցվում ամբողջ աշխարհի աշխատավորների միլիոնավոր սրտերը:

Մեր հոյակապ տարեդարձի նախորեյին գումարված բանակային 6-րդ կուսակցական կոնֆերանսը կուսակցական կազմակերպության անունից կոմունիստական ջերմ վողջույն, շնորհավորանք է ուղարկում Կովկասյան Կարմրադրոշ Բանակի կարմիր բանակայիններին, հրամանատարներին և քաղաշխատավորներին:

Ընկեր կարմիր բանակայիններ, հրամանատարներ և քաղաշխատողներ! Կոնֆերանսը կոչ է անում ձեզ ե՛լ ավելի սերտ համախմբվեք հեղափոխության անմահ առաջնորդ Լենինի միասնական և միակ ժառանգի—Համամիութենական Կոմունիստական Կուսակցության (բայշեվիկների) շուրջը:

Կոնֆերանսը կոչ է անում ձեզ համախմբվել Կոմունիստական Ինտերնացիոնալի մարտական դրոշի շուրջը, տոգորվել դեպի բոլոր յերկրների և ազգությունների հալածանքներն ու ճնշումները տածած ջերմ սիրով, և սրբազան դասակարգային ատելություն տածել դեպի բոլոր շահագործողները ու հալածողները:

Կոնֆերանսը կոչ է անում ձեզ ե՛լ ավելի ամրապնդել յեղբայրական սիրո և մտերմության կապերը Անդրկովկասի ժողովուրդների հետ, ժողովուրդներ, վոր ազատագրվել են միջազգային բուրժուազիայի սպասավորներ—մենշեվիկների, դաշնակների և մուսավաթիստների լծից:

Ընկեր կարմիր բանակայիններ, հրամանատարներ և քաղաշխատողներ! Հոկտեմբերյան տասնամյակը մեծագույն չափով մե-

ծացնում է Սորհրդային Միության, վորպես հաջողությամբ սոցիալիզմ կառուցող առաջին յերկրի, վորպես միջազգային հեղափոխության հենարանի—պատմական պատասխանատվությունը: Հսկայական չափով աճում է նույնպես և Բանվորա-գյուղացիական Կարմիր Բանակի պատասխանատվությունը այն պարագայում, յերբ աշխարհիս միակ պրոլետարական պետության դեմ հակահեղափոխական պատերազմի կատաղի նախապատրաստություն է տարվում:

Ցուրաքանչյուրը մեզանից պարտավոր է կատարել ամենը Կարմիր Բանակի մարտական հզորությունն ամրացնելու համար:

Բանակային ինը պետք է միշտ հիշի, վոր Կարմիր Բանակը, նրա համար, ամենից առաջ հանդիսանում է մարտական պատրաստության դպրոց: Նրա կարեվորագույն պարտքն է—խիստ պահպանել յերկաթի հեղափոխական կարգապահությունը, վորովհետև առանց կարգապահության Կարմիր Բանակը մարտական հզորություն պատկերացնել չի կարելի: Զեռք բերվող քաղաքական գիտելիքները, ակտիվ աշխատանքը լենանկյունում և ակումբում պետք է կարմիր բանակայինների համար առաջին հերթին ծառայեն, վորպես միջոց իր մեջ բանվորա-գյուղացիական Կարմիր Բանակի զինվորի մարտական հատկություններ դաստիարակելու համար: Հեղափոխության գործին անսահման նվիրված լինելը քաղաքացիական պատերազմի տարիների ընթացքում Կարմիր Բանակին հաղթություն տվեց: Այդ պանծալի տարիների հեղափոխական մարտիկի պատկերը պետք է հեղափոխական որինակ ծառայե մեր յերիտասարդ կարմիր բանակայինների համար:

Մեր բանակի հրամանատարների անելիքն է—աճող կարմիր բանակային ակտիվությունը տանել մարտական պատրաստության բարձրացման հունով: Նման խնդիր կարող է իրականացնել միայն յերկրի ամբողջ քաղաքական-հասարակական կյանքին և բանակային հասարակայնության բոլոր տեսակներին ակտիվ մասնակցություն ցույց տվող հրամանատարը, այն հրամանատարը, վոր սերտ կապված է բանակային մասսային, վորն ուշադիր վերաբերմունք է ցույց տալիս բանակայինի առորյա կարիքներին: Քաղաքացիական պատերազմի հերոսական ճակատներում և խաղաղ ուսուցման պայմաններում կատարած

ԳԻՆԸ 15 ԿՈՊ.

2013
<< Ազգային գրադարան
15267
NL0048730